№ 18
ՇԱԲԱԹ 19 ՄԱՅԻՍԻ
1873
ԺԶ-դ ՏԱՐԻ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

№ 18
ՇԱԲԱԹ 19 ՄԱՅԻՍԻ
1873
ԺԶ-դ ՏԱՐԻ

Լրագրիս միջոցով որևիցէ յայտարարութիւն տպագրել տալ ցանկացողը պէտք է 10 միջակ տառերի համար վճարէ 1 կոպէկ: Յայտարարութիւն ընդունվում է և օտար լեզուներով:

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռ: Ստորագրվել կարելի է խմբագրատան (Խանփաշեանցի տանը) և յամ. Ենֆիաճեանցի խանութումը:

Խմբագրութիւնս խնդրում է Մեղուի բաժանորդագրողներուն հասցնել իրան ներկայ տարուայ ստորագրութեան դրամը:

Թիֆլիզ 19-ին Մայիսի

Չէ կարելի չնկատել, որ վերջին ժամանակում մանաւանդ մեր գրականութեան մէջ մեծ ձգտողութիւն եղաւ դէպի դասագրքերի հրատարակութիւնները: Տպուեցան այլ և այլ դասագրքեր շինած կամ թարգմանած: Սակայն այն աշխատասիրութեանց մէջ ուշ չէր դարձած, ինչպէս հարկն է, թէ ձևի և թէ նոցա նպատակայարմարութեան վերայ. այն ինչ դասագրքի հրատարակութիւնը մեծ նշանակութիւն ունի և պէտք է ամենայն զգուշութեամբ լինի, ըստ որում նորա միջոցաւ զարգանալու և կրթուելու է ապագայ սերունդը:

Մենք, կարողութեան չափ, մեր կարծիքը յայտնել ենք գրախօսապէս լոյս ելած դասագրքերի մասին և ապագայում էլ աշխատելու ենք խօսել: Իսկ այժմ մտաբերելով մեր գրականութեան մէջ յարուցած մեր ուսումնարանների արդի դրութեան պատճառաւ լաւ և ընտիր դասագրքերի կարևորութեան վերաբերութեամբ զանազան առաջարկութիւնները, որոնց մասին և Մեղուն իւր անցեալ տարուայ 33 համարի մէջ արեց իւր նկատողութիւնը:

Մեր պարբերական հրատարակութեանց առաջարկութիւնը այս մասին մնացին անգործադրելի, գոնեա մինչև այսօր չէ կազմած այնպիսի մի ընկերութիւն, որ մենք ցանկանում էինք և հայրենասէր ուսումնարանները մեր անհոգութեան պատճառաւ մեծ անյարմարութիւններ են կրում մանկավարժական լաւ ձեռնարկներից զրկուած, աւանդելով այնտեղ սկզբնական ուսումը էլի հին դաստիարակական ձևով. թողնենք այլ և այլ առարկաների դասաւորութիւնը, որ, բոլորովին ձեռնարկ չունենալու պատճառաւ, լինում է միշտ որևիցէ վարժապետի հասկացողութեան և գլխութեան չափով:

Ի՞նչ է արգելում մեր կրթեալ հային կազմելու մի այդպիսի ընկերութիւն և մասնակցել տալու նորան մի քանի անձանց, որոց յարմար կդատէ նա իւր հասկացողութեամբ: Չէ՞ որ մեր առաջարկութիւնը ուղիղ նայում էր դէպի հասարակական գործը, որով նա այս վերջին ժամանակում, կարծեոք, շատ է զբաղուած: Կարծեմ ոչինչ: Եթէ նորան խորթ թուեց մեր առաջարկութեան մի պայմանը, այն է սկսել գործը որևիցէ ծանօթ ընտանիքի մէջ, յետ ենք առնում մեր խօսքը: Եթէ նա համակրութիւն չստացաւ մեր ընտանիքի կողմից, թող ինքնուրոյնութեամբ գործէ, հաւաքելով իւր չորս կողմը իւր ծանօթ անձանց: Մեր առաջարկութիւնը միայն նորա համար էր, որ նա կարողանար այդ ձևով և մեր օրիորդների աշխատանքի ասպարէզ դուրս բերելու, որ ձեռք ձեռքի տուած միասին մասնակցէին այն ազնիւ գործին:

Փառք Աստուծոյ անցաւ այն ժամանակը, երբ Հայ մարդը այդ տեսակ գործերում դանդաղ էր հանդիսանում, վախենալով, որ նորա դրամը անդառնելի կորչի և կամ երբ ինքը դեռ համոզուած չէր գործի շահաւէտութեան: Այժմ բոլորովին ընդհակառակն է. նա համոզուած է, որ դորա մէջ հասարակութեան կողմից մեծ պահանջողութիւն կայ: Իսկ ինչ որ վերաբերում է դրամին, ոչինչ չի խնայում, երբ դառնում ենք նորա օգնութեան: Բայց այդպիսի հայը մի պակասութիւն ունի, այն է, որ նա կամենում է հեռուից մասնակցել գործին: Նա ասում է. ինձ դադար տուէք միայն, ինչ որ ուզենաք ինձանից ես կտամ: Եւ տալիս է: Թատրոնի տոմսակ էք առաջարկում նորան, թէ խնդրում էք որ բարերար գրուի որևիցէ ուսումնարանի կամ թէ ստորագրուի Հայերէն գիրք տպելու համար—նա չէ հրաժարվում, ասելով ինձանից փող են պահանջում, ես էլ տալիս եմ. բայց նորան հրաւիրում ես, որ նա անձամբ գործին կպչէ և մասնակցէ. այն ժամանակ որևիցէ մասնաւոր պատճառ կգտնէ և կհրաժարուի գործից: Այս պակասութեան խորհուրդը ինքնախաբ և անիմաստ երկիւղն է, որ դարաւոր ծուլութեան հետ միասին արգելք է լինում գործը սկսելու և առաջ տանելու: «Մասնակցում ես դու էլ այս կամ այն գործին, որ արած են Հայ հասարակութեան օգտի համար», հարցնում է նա մի երիտասարդից: Լսում է համարձակ պատասխան, թէ «այո»: Հարցնողը զարմացած նայում է գործ կատարող անձին և հեգնական կերպով քթի տակ ծիծաղելով հեռանում է նորանից: Երիտասարդը սառած մնում է Հայի այդ տեսակ արարմունքից և սկսում է մտածել, այնքան խորհրդաւոր է թւում նորան հայի ժպիտը: Մտածելուց յետոյ փոքրոգութիւնը նորան յաղթում է և հեռանում է գործից: Այսպէս են հասարակական գործից ձեռք առել մեր երիտասարդները, միմեանց դէմ հաւատ չունենալու պատճառաւ: Այսպէս ամենայն ընկերական գործ կարող է մնալ մեր մէջ, եթէ այդ տեսակ անձանց դէմ չբողոքենք և չհամոզենք դոցա, որ բարի և ազնիւ գործը, որ նայում լինի դէպի հասարակութեան մտաւոր կամ բարոյական օգուտը, չէ կարող ծնուցանել մեր մէջ երկիւղ ոչինչ բանից և թէ պէտք է աշխատել ամենայն խոչընդոտների առաջը առնել և գործին ձեռք զարկել գիտակցաբար և համոզմունքով:

Դառնում ենք մեր հասարակութեան այն փոքր մասին, որ իւր վստահութիւնը պահելով իւր գործունէութեան ազնուութեան և նպատակայարմարութեան վերայ շարունակում է գործ կատարել, շրջապատած լինելով վերյիշեալ անձինքներով: Թող միայն նոքա հասկանան, որ այն անձինք, եթէ մինչև անգամ ևս առ երևս համակրող են ցոյց տալիս իւրեանց, անպատճառ իւրեանց գործին արգելք կդառնան. այն տեսակ անձանց խօսքը գիտական զօրութիւն է ունենում: Նոքա այս հանգամանքում մեր գրութեան յարմար անկեղծութիւն կգտնեն, որից բոլոր հասարակութիւնը սառած մնացած և ձեռքերը կախ գցած ձեռք է վեր առնում սկսած գործից: Բայց մեզ դոքա չպէտք է վախեցնեն. դոքա այն տեսակ մարդիկ են, որ իւրեանք չկարողանալով գործ կատարել, նախանձում են ուրիշների բարի գործունէութեան: Թո՛ղ այսպիսիք ծաղրեն, անարգեն, որքան կամին, փոյթ չէ, նոցա բաժին պէտք է հանել լոկ սառըն արհամարանքը, որին միայն արժանի են իւրեանց ամբողջ էութեամբ: Հեռացնենք այնպիսիներուն մեր միջից և շարունակենք մեր նպատակաւոր և գիտակցական կեանքը: Թող մեր նշանաբանը լինի ընդհանուր մարդկային նշանաբանը աշխատասիրութիւն յօգուտ հասարակաց: Ցուցենք, որ մեր ապագայ սերունդը մեզանից է սպասում իւր մարդավայել կրթութիւնը և զարգացումը, որ մեր սերունդը իւր բարոյական կեանքի հիմունքը մեզանից ակն ունի ստանալու: Եթէ այս այսպէս է, ուրեմն աշխատենք, որ մեր երեխաները ոչ թէ անուշահամ ընթերցքներով վերջանան, այլ մի ընտիր դասագրքի առողջ քննադատութեամբ, որ չբաւականանանք հիմնուելով մեր երեխաներում որևիցէ լոկ ժամանակաւոր տպաւորութիւն գործող գրուածքի վերայ, այլ զբաղեցնենք այնպիսի աշխատասիրութիւններով, որոնք կարող են տալ արգիւնաւոր պտուղ ապագայում: Աներկիւղութեամբ պէտք է ընթանալ այս ճանապարհով, աչքի առաջ ունենալով միայն և եթ հասարակական շահն ու օգուտը:

ՍՕՓՕ(*)

(Վէպ)

11

Կացուցանել երեխայի կեղծ դրութեան մէջ միւս երեխաների վերաբերութեամբ կնշանակէ միանգամայն կործանել նոցա միամիտ բարոյական կազմը և տալ կարողութիւն մէկին իւր գլուխը միւսից գերադասող համարելու և մէկին զգալ տալու, որ նա անպատճառ պէտք է ենթարկուի միւսի ճնշման և ինքնահաճութեանը: Այս տեսակ կեղծ ճանապարհի վերայ կացուցին Կանթեղեանք իւրեանց զաւակներին միմեանց վերաբերութեամբ: Տարէ տարի բոլորովին անզգալի կերպիւ այդ կեղծ դրութիւնը ստացաւ թէ արտաքուստ և թէ ներքուստ աւելի մեծ ոյժ և կարողութիւն զարգանալու և անտանելի դառնալու և զգալի կացուցանելու երեխայոց միմեանց յարաբերութեանց մէջ:

Մեկ կողմից անսանձ բռնութիւն, միւս կողմից անտրտունջ հնազանդութիւն, տարէ ցտարի իւր բոլոր ազդեցութեամբ մարդոց մէջ սաստկանում է, եթէ միայն միանգամ մարդը չբողոքեց դորա դէմ և չմերժեց իւրեանից այդ լուծը: Մի տան գերդաստանի անդամների մէջ զարգացնել այդպիսի յարաբերութիւններ, որ ծնում է բոլորովին միմեանց հակառակ զգացմունքներ, կարող էր տեղի ունենալ միայն Կանթեղենց տանը, որտեղ իւրեանք ծնողները չէին իմանում թէ իւրեանց գերդաստանում ով դերը ով պէտք է ունենայ, որտեղ հրամայողը տանուտէրն էլ էր և աղախինը: Սօփօն մեծանում էր: Այն անբնական դրութիւնը, որի մէջ թողել էին նորան ծնողները, չէր կարող թագկենալ նորա աչքից. նա հասկացաւ խելքն և անգիտակցաբար աշխատում էր հեռացնել ինքն իրան այն նեղութիւններից, որք կարող էին յառաջանալ նրա և ամենեցուն յարաբերութեանց մէջ: Ամբողջ օրերով նրան կարելի էր տեսնել իւր սենեակի մէջ պարապած գործով. նա շատ էր սիրում կար անել և մայրը այդ դէպքում չէր զրկում նորան այդ ուրախութիւնից, մինչ դի նորա քոյրերը և եղբայրները պարապած էին զբօսանքներով: Տան ամենայն բանի կար անողը Սօփօն էր, քոյրերի և եղբայրների շորերը կարելը և կարկատելը նորան պարտաւորութիւնն էր: Ամենայն անպէտք գործ նա անտրտունջ վարում էր ու ճշդութեամբ կատարում. նրա համար ոչ յօգնութիւն կար և ոչ հիւանդութիւն, ինչպէս մի մեքենայ աշխատում էր նա և դադարում գործից միայն ճաշի և թէյի ժամանակ:

—Սօփօ... անա... պուգվիցէն վէր ընդաւ, կարէ շուտ, կոպիտ ձգում էր Սօփօյի երեսին նորա եղբայրներից մին իւր սերթուկը:

—Ելի... երեկ չէր վուր կարեցի... փոքր ինչ մեղմ, բայց սրտի կսկիծով, ասում էր Սօփօն, վեր առնելով սերթուկը:

—Սուս, կարէ ու պրծի... նոյն կոպիտ ձայնն էր լսվում եղբօրից:

Սօփօն սուս էր կենում և տուած գործը կատարում: Սօփօյի վզին գցում էին գործ ոչ թէ նորա մայրը, եղբայրները և քոյրերը, այլև աղախինները և ծառաները, երբ իւրեանք չէին ցանկանում բան շինել: Սօփօն կատարում էր բոլորը, ամենևին չտեղեկացած, թէ որքան այն գործը նրան է պատկանում շինելու:

Ժամանակը անց էր կենում, բայց Սօփօյի ուսման մասին դեռ չէին մտածել նրա ծնողները: Առ հասարակ Կանթեղենց տանը ուսման մասին շատ փոքր էին մտածում, որովհետև տան տիկինը թէպէտ աշխարհի ամենայն արտաքին նորաձևութեան շատ էր հետևում, բայց մինչև այն աստիճանի չէր հասել, որ երեխաներին ուսում տալու մէջ նա ունենար հարկ նմանիլ այն անձանց, որոց որդիքը ազատօրէն ստանում են ուսում և կրթութիւն: Նորա երկու տղերքը երկար ժամանակ գիմնազիայի առաջի դասատունը մնալուց, պէտք է դուրս էին եկել այն տեղից և մտել վաճառականի մօտ, նորա արհեստը սովորելու, նորանից կրթութիւն ստանալու: Աղջկերանցից մինը առանց որևիցէ կրթութեան մարդու էր գնացել, իսկ երկուսը գնում էին մի մասնաւոր աժան ուսումնարան, որտեղից պէտք է դուրս էին բերել այն, ինչ որ հարկաւոր է աղջկան: Այս պայմանով Բարբարէն տուել էր իւր աղջկերանցը ուսումնարան, բայց թէ ինչ պէտք է նոքա այնտեղից դուրս էին բերել աղջկական ուսում, այդ նորան բնաւ յայտնի չէր: Իսկ Սօփօյի ուսման մասին նա մտածել անգամ չէր կամենում: Մի մի անգամ, երբ Կարապետը հարցնում էր Բարբարին թէ ինչու նա մէկէլ երեխեանց հետ Սօփօյին էլ չի ուղարկում ուսումնարան, Բարբարէն պատասխանում էր.

—Էդ վախտին էլ կու հասնի, դրա համար մի նիղանայ դուն... ինչ քու մէկէլ վուրդիքը դուրս բերին ուսումնէն, էն էլ նա կու դուս բերէ:

Այս բաւական էր Կարապետին, որ լռել էր, որովհետև ինքը կնօջից պակաս չէր նեղանում, որ նրա որդիքը այնպէս անուս դուրս եկան, այնքան նոցա վերայ փող մսխելուց յետոյ:

—Իմ երեխեքը խիստ լաւ երեխեք էին տանը, ասում էր նա, ամա չկօլէն խիստ փչացըրուց նրանց... էս էլ ձեր հիմիկուայ ուսումը:

Ծնողները իւրեանց որդւոց անպէտքութեան վերայ տրտնջում էին և նորա պատճառը ուսումնարանն էին համարում, մինչ դի իւրեանց մեղքը նոքա չէին ճանաչում: Երեխեանց առաջնական կրթութիւնը շատ թոյլ և կոպիտ հիման վերայ էր. և երբ նոքա ուսումնարանում առ երես հանդիպեցան նորա մէջ բարոյական տարրին և սկսաւ այս տարրը ազդել և նոցա վերայ ևս, նոքա չըմբռնեցան նորան և նոցա մէջ մնացած և մացրած անպիտան կրթութիւնից—անբարոյական կողմերը մերկացան և բոլոր իւր զօրութեամբ հանդիպեցան ուսումնարանի վարչութեան առաջ. սա չկարողացաւ տանել նոցա, վախենալով միւս երեխայոց բարոյականութեան համար: Դեռ այնքան թոյլ են մեզ մօտ մեր մանկավարժները կրթութեան մէջ, որ չեն վստահանում արմատախիլ անելու երեխայոց մէջ առաջուայ կրթութիւնից առաջացած վատ և վնասակար կողմերը:

Սօփօն առանց ծնողաց միջնորդութեան հասաւ իւր նպատակին: Նա մի մի անգամ առնում էր իւր եղբօրից կամ քոյրերից գրեանքը և ազատ ժամանակ մենակ իւր սենեակում կարդում: Կարդալը նա սովորեցաւ նոցանից ևս այսպէս. Երբ որ նա կտեսնէր նոցա ձեռքին գիրքը, նա մեկից մեկ տառ էր հարցնում և այնտեղեա արտագրում և նորա հնչիւնը յիշում, միւսից գրել էր սովորում և այսպէս հանաք հանաք նա մեկ քանի ամսում արդէն կարողանում էր ազատ կարդալ և տառեր խծբծել: Սիրում էր նա կարդալ ընթերցարանի մէջ տպած Աւետարանի գլուխները և նա մանաւանդ հանելուկներ իմանալ. զանազան առակներ և զրոյցներ նա չէր հաւանում, նորան խիստ թեթևամիտ բաներ էին թւում նոքա:

Ծնողները ի հարկէ չէին խանգարում նորա այդ ինքնակրթութեանը, որովհետև այդ ձեռնտու էր նոցա նիւթական կողմից, որ երկու երեք մանէթ ամսական ուսումնարանի փող կը մնար նոցա ձեռքում և այնքան էլ փող ոտնամանի համար, որ անպատճառ կ'մաշէր նա այնտեղ մանգալով: Բայց նորա յառաջադիմութեան վերայ նորա մայր Բարբարէն շատ ծուռ և նախանձոտ աչքով էր նայում:

—Վա՜յ... գոչում էր նա, երբ նորան Սօփօյին հարցաքննողներից մինը յայտնում էր աղջկայ յառաջադիմութեան մասին... մոխր էն սատանին... ինչ ուշք ու միտք է ունեցի, քա: Իյ... ինչ ասիմ դրան, վուր դա իմ Նատոյին փեփէլի խիլքին չհասնի...... էդ մէ կարթալն է էտինց էլի. մէ բաշ քան իրա տոլ աղջկերանց մէջ մէ նմուտ չնստի ու չխօսի... այ դրա գլխի պատուտուիլը դա էտու չուք ունէ....:

Բայց թէ թողնում էին Սօփօյին, որ նա իւր հասակակից աղջկերանց հետ նստէր ու վեր կենար, այդ Բարբարէն չէին հարցնում, լաւ իմանալով, որ Սօփօյին դերու պէս էին պահում Կանթեղենց տանը և ոչ մի տեղ գնալու իրաւունք չէին տալի, մինչև անգամ, երբ որ նոցա տանն էլ հաւաքվում էին աղջկերք, նորան անպատճառ մէկ գործ կըպցան տալին ու նրանցից

(*) Ծանօթ. Տես «Մեղու Հայաստանի (№№ 5, 9, 11, 12, և 14)

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 21 ին երկուշաբթի կ'սկսվին տեղւոյս Ներսիսեան ազգային—հոգևոր դպրոցում հրապարակական քննութիւնքը: Նոքա կ'սկսվին առաւօտեան ութ ժամին։ Ցանկացողք ներկայ գտանվել քննութեանց օրերի ցուցակը կարող են կարդալ նոյն դպրոցում։

Մենք այս տարուան մեղուի 4 համարում յայտնել էինք հայ հասարակութեանց կ. Պօլսի սուրբ Սանդխտեան ընկերութեան կազմվելն ու նորա նպատակը և մի և նոյն ժամանակ ցոյց էինք տուել, թէ որքան կարօտ է այդ ընկերութիւնը հայ հասարակութեանց նիւթական օժանդակութեան իւր սրբազան նպատակին հասնելու համար: Սրբազան ենք ասում, որովհետև նորա նպատակն է կրթել մի ամբողջ նահանգի վասպուրականի հայ մայրերը: Միևնոյն միջոցին մենք ցոյց էինք տուել թէ մօր դաստիարակութեան նշանակութիւնը ընդհանրապէս և թէ վասպուրականի ազգայնոց կրթութեան նշանակութիւնը մանաւորապէս։ Լսեցինք, որ մի քանի մասնաւոր անձինք մեծ համակրութեամբ ընդունել էին մեր առաջարկութիւնը, յիշեալ ընկերութեան ձեռքերը բաց անելու և նրան օժանդակելու վերաբերութեամբ։ Բայց դժբաղդաբար մինչև ցայժմ այսպիսեաց բարի և ազնիւ ցանկութիւնը իրագործված չերևեցաւ, որ աւելի ցանկալին է։ Մենք զգայուն ենք, զգում ենք շուտ. բայց այս գործի սկզբնաւորութիւնն է միայն, նախագիծն է. գլխաւորը նորա գործադրութիւնն է, որ պահանջում է շարժողութիւն, զանազան զգայարանների գործունէութիւն, պահանջում է ներողութիւն, որ ուրախութիւն է, պահանջում է զոհաբերութիւն պտուղը վայելելու համար. պահանջում է ճիգն պարտականութեան համար։ Ցանկալի էր, որ մենք գործի սկզբնաւորութեան վերայ կանգնած չմնայինք, քաշվելով աշխատանքից, լոկ զգացմունքով չբաւականանայինք, այլ սովորէինք խոկոյն գործին ձեռնամուխ լինելու. որ միայն երաշխաւոր է նորա յաջողութեան, որ միայն իսկապէս պատիւ է մեզ և որ միայն մեր պարտաճանաչութեան և պարտականութեան վկայ կարող է լինել։ Ուրեմն թող վերոյիշեալ գործին համակրողները, աներկիւղ գործի ծանրութիւնից, իրագործել աշխատանն իրանց զգացմունքը, թող չքաշվէն իրանց գործունէութեան փոքրիկ պտուղից. սա այնպիսի գանձանակ է, ուր լումայն էլ կարելի է գցել և ընդունելի է հաւասար ցանկութեան մեծութեան։ Եթէ հայ տիկնայք և օրիորդներ ընդհանուր մարդկային բարեգործութեան համար տուփը վզերին կախած դանէ դուռը ի'թափառն ողորմութիւն ժողովելու, որովհետև այդ իրանց խիղճը հրամայում է, այդ իրանց սրտի զգացմունքն ու պարտաճանաչութիւնը համայում է. մի՞թէ մեր զգայուն, փափկասիրտ և բարեմիտ օրիորդներն ու տիկինները նոյնը անելու պիտի քաշվին իրանց սերնակից կարօտեալ և թշուառ քոյրերի համար։ Ի՞նչ է նրանց այս բանում խոչընդոտն եղողը. մենք կարծում ենք ոչինչ, բացի իրանց ազատ կամքը։ Մենք մեր կողմից շատ կարող ենք համարում նրանց և անընկճելի ու անխոնջ գործակատարութեան համար, աչքի առաջ ունենալով նոցա զգալից բնաւորութիւնն. եթէ միայն կունենային ազատ կամք և ցանկութիւն գործելու։ Ուրեմն ցանկանում ենք նրանց 'ի բոլոր սրտէ կամք և ցանկութիւն և գործը արդէն կատարած ենք համարում։

Խմբագրութիւնս, թեթևացնելու համար այս բարեգործութեան մասնակցել ցանկացողների գործը, յանձն է առնում ստորագրութիւն ընդունելու և ամեն նուիրատուների անուններն ու նուիրատուութիւնքը հրատարակել 'ի լոյս հասարակութեան։

ԲԱՐՎԱՆ—ՍԱՐԱՑ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լօռուից)

Կարդալով «մեղու» լրագրի մէջ Հայաստանի զանազան տեղերում գտնվող հնութիւնների մասին, մենք էլ մեր կողմից աւելորդ չենք համարում յիշելու մեր կողմերում գտնվող հնութիւնները։

Գիւղերս չորս կողմում գրեթէ ամեն տեղ գտնվում են կիսակործան եկեղեցիններ, աւերակ տներ, գերեզմանաքարեր և զանազան նահապետական հին գործարանների սիւներ։ Այս աւերակներից մի քանիսի սկզբնական անունը դեռ ևս մնում է ժողովրդոց մէջ, միայն գործ են ածում կամ փոքր զանազանութիւնով, կամ հենց բոլորովին թուրքերէն, իւրեանց սովորութեան պէս, ինչպէս Սևպատակ կեղցի (սպիտակ եկեղեցի), Դլեքշլեսիայ (Թրաձև լեռան), Գամեր, Խոզմարաք, Սուրբ ուհանէս, Զարդախլու, Բլլըրմնուտ, Գեղատեղ, և ուրիշ շատերը։ Այս գեղատեղերում գիւղացիք երբեմն երբեմն գտած են գետինը վարելիս զանազան գործիքներ և հին ձեռագործ խաչանիշ գծերով նըկարած անօթներ։ Խուրաքանչիւր գեղատեղում գտնվում են սկսած մէկից մինչև երեք եկեղեցիներ, որոնք խտութեամբ ապացուցանում են գիւղատեղերիս երբեմն եղած բնակչաց բազմութիւնը։ Սուրբ Ուհանէս եկեղեցում, որի առաստաղը գրեթէ խանգարված է, կայ մի գերեզմանաքար։ Անձրևի կաթիլները միշտ և անխնայ կաթկաթելով առաստաղի ծակերից գերեզմանաքարի վերայ անկանոն ձևով զանազան նկարներ են արել։ Մի աւանդութիւն այդ գերեզմանաքարի նկարների համար. Նոքա պատմում են իբր թէ նոյն Սուրբ Ուհանէսը այդ քարի վերայ երկարաձիգ ծնրադրութեամբ փոս է արել ոտքերի բոյթերով, ձեռքերի մատներով։ Խոզմարաք կոչված գիւղատեղում կայ նոյնպէս մի գերեզմանաքար, որի վերայ կան փորագրած քանի մի տողեր։ Այս գրվածքը ես անձամբ կարդացի։ Գրվածքի իմաստն է այն, որ նորա գրողը կամենում է ասել, թէ ինչպէս թանգութեան ժամանակում կարողացել է կառավարել մի ամբողջ գերդաստան, բաղկացած մօտ 25 հոգուց։ Գրուածքի վերջում կայ մի ցուցակ, որի մէջ գրված է, թէ ինչպէս է ծախվելիս եղել այն ժամանակ իւղը և ցորենի լիտրը, հացի թաղարը, հարիւր ձուն և այլն։ Այդ նշանակած գները, համեմատելով մեր սովորական գների հետ, քան անգամ այժմեան գներից աժան են։ Այսքանը ասելով մեր ծանօթ հնութեանց մասին, այժմ յիշենք գիւղացոց կարծիքն և գիտաւորութիւնը դէպի նոցա։

Գիւղացիք այս մեր վերը յիշած աւերակների եկեղեցիներն համարելով զանազան նահատակների և սրբերի բնակարաններ, յաճախակի ուխտագնացութիւն են անում։ Ուխտակատարութիւնը լինում է այսպէս. վերցնում են իւրեանց սովորութեան պէս մի աքաղաղ, քանի մի զոյգ մոմ, մի երկար թել, ոլորած բամբակից, և գնում են ուխտադրելու տեղը, վառում են մոմեր և բամբակեայ թել, քանի մի անգամ փաթաթում են եկեղեցոյ շուրջը, յետոյ սկսում են ծնրադրութիւններ։ Այս բոլորից յետոյ մորթում են աքաղաղ, գլուխը և ոտները ածում են եկեղեցու մի անկիւնը, ուր և փչփչում մնում են տարիից տարի, իսկ աքաղաղի մնացած միսը սովորաբար բաժանում են օտարներին։ Եթէ նրանց զոհը աքաղաղի փոխանակ լինում է գառը, որը վերաբերում է աւելի հարուստներին, ապա գառի էրին և մորթին տալիս են իւրեանց գիւղի քահանային, որով կարծում են, թէ աւելի ընդունելի եղաւ իւրեանց զոհը։ Այսպիսով վերջանում է ուխտադրութիւնը։

Գ. Պապեան։

Ամսոյս 10-ին հայ դիլետանտական խումբը ներկայացրեց «Շուշանիկ» ազգային ողբերգութիւնը, գործ. պ. Ց. կարինեանց։ Ժողովուրդը սակաւ էր և խաղը շատ թոյլ անցաւ, մանաւանդ «Դալալ Դադօն» բոլորովին անյաջող կերպով անցաւ և ժողովուրդը թատրոնից դժգոհ մնաց։

—

«Մշակը» հաղորդում է, որ շուտով մտադիր է բաժանորդագրութեամբ պ. Րաֆֆիի «Փունջ» վերնագրով բանաստեղծութիւնքը հրատարակել և եթէ այդ մտադրութիւնը կը յաջողվի, կը հրատարակէ և նորա միւս երկասիրութիւնքը։

—

Թիֆլիզում նորերումս Ց. Արրահամեանց թիֆլիզեցի հայը վախճանվելով մի նշանաւոր կալուած է կտակել Ներսիսեան Հոգևոր—Ազգային դպրոցին։

ՆԵՐՔԻՆ

Յետագայ նամակը խմբագրութիւնս ստացաւ ռուսերէն լեզւով քաղաքացիներից մինի ստորագրութեամբ։ Նորա պարունակութիւնը հետաքրքիր գտնելով, մենք թարգմանութիւնը առաջարկում ենք մեր ընթերցողներին։

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Անձ մի տարուց աւելի է, որ քաղաքումս լուր է տարածված թէ կովկասի քաղաքներին ինքնակառավարութիւն են տալու։ Որքան ճիշտ է այս լուրը ինձ յայտնի չէ, բայց չէ կարելի չը յայտնել այստեղ մեր խորին համակրութիւնը այդ դիտաւորութեանը և չցանկալ, որ այդ միտքը շուտով իրագործուի, որով մենք քաղաքացիներս կարողանանք ցոյց տալ մեր ընդունակութիւնը ինքնակառավարութեան մէջ։

Յայտնի է, որ թէ մի որևիցէ հասարակութիւն ինքնակառավարութիւն է ստանում, կը նշանակէ, որ այն հասարակութիւնը կարող է վայելել նորան այնպէս, ինչպէս որ այդ պահանջումէ ինքնակառավարութեան սկզբունքը։ Այսինքն ես կարող եմ կառավարել իմ գործերը երբ ես զարգացած եմ, երբ իմ անհատական կեանքը դորա մէջ զգում է հարկաւորութիւն։

Քաղաքումս ինչպէս լուր տարածուած է նոյնպէս, թէ մի քանի նահանգապետներ մեր երկրի բնակիչներին այնքան զարգացած և հասունացած համարեցին, որ նոցա մէջ ինքնակառավարութեան սկիզբը մտցնելու հարցը անհրաժեշտ պայման են սեպում։

Անկասկած, երբ գործը կատարեալ մի իրք, երբ քաղաքային խորհուրդների այդ բարիքն ևս կը ճաշակեն մեր հասարակութեան անդամները, այն ժամանակ յուսալ կարելի է, որ նոքա հասարակական գործերի մէջ գանգատ էլ չեն հանդիսանալ և քաղաքային վարչութեան դահլիճը զուրով լքնելու փոյթ չեն ունենալ ընտրեալներով։

Այն ժամանակ ի հարկէ նոցանից ամեն մէկը հաստատ կլինի իւր համոզմունքի մէջ և չեն կրկնուի այն անհաճոյութիւնքը, որ այժմս թէ քուէարկութեան և թէ վիճաբանութեանց մէջ տեղի են ունենում քաղաքի ընդհանուր ժողովների մէջ։ Պէտք է ասել, որ միևնոյն նստի մէջ, կէս ժամի միջում, մի հարց քուէարկելու ժամանակ ձայները մէկ բանակից միւս բանակ չեն թռչելու՝ 18 ձայն ունեցող հարցը փոքր ժամանակից յետոյ յանկարծ երկրորդ քուէարկութեան ժամանակ 16 ձայն չի ունենալ։ Այն ժամանակ զուցէ մենք չենք տեսնելու, որ նրանց մէջ եղող անդամներից մի քանիսը միայն լինին միևնոյն ժամանակ հարց առաջարկողներ խօսողներ, վիճողներ և նորա վճռատուողներ. իսկ միւսները անտարբեր հանդիսատեսի գործի մէջ։ Ինչքան է, նորանից, որ ընտրեալները հասարակական գործերի հետ իւրեանց մասնաւոր գործերն են խառնում և դուրս է գալիս, որ նոքա խմբերի յուն մեկմեանց դէմ են պահում և մեղադրում իւրեանց համոզմունքների դէմ. «Փլան փլանը այսպէս է ասում, ինչ հաջաթ թող ասի, նրա դէմ ինչպէս խօսիմ, որ յետոյ ինձ վերայ ջիգր հանէ»։ Գովելի յատկութիւն, այդ կարելի է մասնաւոր կեանքի մէջ. բայց ոչ հասարակական գործերի մէջ են հարկաւոր այդ տեսակ մարդավարի զգացմունքներ։ Նոքա չեն կամենում փլան փլանին բարկացնել իւրեանց բողոքով նորա դէմ, իսկ նա իւր առաջարկութիւնը առաջ է տանում և նորանով քանդում հասարակութեան համար օգտաւէտ գործը......

Հասարակական գործերի մէջ երեսպաշտութիւնը կամ խաթր տեղ չպէտք է ունենայ. նա մանաւանդ երբ ամբողջ հասարակութիւնը վերջը պահանջելու է նոցանից հաշիւ արած գործերի մէջ։

Այսքանս կամենում էի ասել ինկատի ունենալով հասարակական հարցերի քննութիւնը, որ անելու են մեր քաղաքի ընտրեալները այս քանի մի ժամանակում։

Ընդունեցէք եայլն։

Քաղաքացիներից մինը։

ԹԻՖԼԻԶԻ ՋՐԱՆՑՔԸ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։

Ամսոյս 10 և 11 Թիֆլիզի քաղաքային վարչութեան խօսակցութեանց նիւթ է Թիֆլիզի ջրանցքի և գազային լուսաւորութեան հարցը։ Ընթերցողին արդէն յայտնի է, որ այս հարցը մի տարի առաջ յարուցած է քաղաքային վարչութեան մէջ, բայց դեռ ևս ոչ մի եզրակացութեան չեն էլ գալու, նայելով այն հանգամանքին, որ երևում է ընտրեալների գործին մասնակցելու ձևից։ Այսպիսի գործ, որպիսի է տալ հասարակութեան մաքուր և առողջարար ջուր և հեռացնել փողոցներից գիշերուան մութն և խաւարը, մեր կարծիքով պէտք է համարուէր էական հասարակական հարց, բայց տարաբաղդաբար այդ հարցերը դոնեա դեռ ևս այնքան չեն պարապեցնում հասարակու-

---

կենդանացնէին, կամ թէ ուղղակի չէին թողնի նրան նրանց մօտ։

12.

—Հաւաքեցէք, կարգի բերէք օթախները, հօրէս փեսէն դուրս, հրամայում էր Բարբարէն մի օր, մանելով դահլիճը։ Մարինէ, չուստ Նատօյին հագցրու, գոչեց նա, տանելով իւր մանրիկ աղախնուն և մի կողմ անելով ցած ձայնով ասաց, Սօփօյին էս մէկ քանի օր էնէնց պահէ, վուր չտեսնէ նրան էն տղէն։

—Ինչի միթամ, բանը դրստեցիր, ումիկ կայ գլուխ գալու։

—Հա, հա ... գնա քու բանը տես, անհամբերաբար պատասխանեց Բարբարէն և գնաց իւր սենեակը։

Ժամի տասներկուսին եկաւ կանթեղինց տանը մի բարձրահասակ զանգրամազոռու երիտասարդ տղայ։ Սա կոխեց թէ չէ դրան շեմքը, իսկոյն տան ամենայն անկիւնում լսուեցան քչփչանք՝ փեսէն եկաւ, ինչ սիրուն տղայ է, ով գիտենայ Նատօյին։

Նատօն զուգած դուրս եկաւ մօտիկ սենեակից, աչքերը գետնին ցցած, անմեղութեան կերպարանքով։ Նորա դուրս գալուց յետոյ փեսէն մի փոքր սփոթեց, բայց իսկոյն ուշքի եկաւ և մօտենալով իւր հարսին, առաւ նորա ձեռքը։ Երիտասարդները ծանօթացան միմեանց հետ։ Երիտասարդ Գէորգ Ալմասեանցը, կանթեղինց փեսայ, քաղաքումս լաւ վաճառական էր յիշվում։ Սա արտասահման առուտուր էր անում և իւր բնական խելքով շատ առաջ էր գնացել միւս վաճառականներից։ Սա տեսել էր մի օր կանթեղինց տան մօտ անց կենալիս մի սիրուն աղջիկ, աչխոյժ և զուարթ դէմքով պատշգամբի վրայ կանգնած և մի հայեացքով նա բոլորովին յաղթուել էր այն աղջկանից։

—Բայց նորա բնաւորութիւնը, աչքերի կայծը, որ այնպէս խոր մտան իմ սրտումս, չեն նոքա, թէպէտ միևնոյն դէմքն է, միևնոյն սևորակ աչքեր, մտածում էր փեսան մի օր դուրս գնալիս իւր նշանածի տանից։

Յետոյ աւելացրուց, կարելի է աղջկան պատուիրել են, որ զգոյշ պահէ իրեան և չը արտայայտէ իւր կոյսաւ բնաւորութիւնը, որ մեր քաղաքացիների կարծիքով մեծ անպատւութիւն է տան համար։ Մխիթարում էր իրեան մինչև սիրահարուած երիտասարդ տղան, երբ նա ներկայացնում էր իրեան իւր տեսած օրիորդին և համեմատում էր նորան իւր նշանածի հետ։ Երիտասարդի սիրտը չդիմացաւ և մի օր, երբ իւր նշանածի հետ նստած էր մի կողմ դահլիճում, ուղղակի առաջարկեց նորան այսպիսի հարց՝

—Նատաշա, ասա խնդրեմ, քանի քոյր ունիս դու։

—Մէկին հօ տեսար, ափիցարի կնգան, Նինուցան, մէկն էլ ուրիշ քաղաքումն է մարդու գնացած, հիմի խօ ու էլի ...... աղջիկը կանգնեց։

—Էլի . . . էլի ո՞նիս. . . .

Աղջիկը կարմրեց և աչքերը գետնին ցցած կծոտում էր պռօշները։ Նրան պատուիրած էր Սօփօյի անունը չտայ երբէք, իսկ այժմ երկու կրակի մէջ ընկած, չէր իմանում, թէ ինչպէս ազատուէր նշանածի հարցմունքից և խնդրելուց։

—Ո՞վ . . . մէկ էլ Սօփօն է, հազիւ արտասանեց Նատօն, արհամարհանօք և վեր թռչելով տեղից, սողաց միւս սենեակ։

Փեսան մնաց տեղն ու տեղը այլայլուած։ Երկար ժամանակ հայեացք այն կողմ ձգած, ուր անյայտացաւ Նատօն, կանգնած էր անշարժ։ Նոյն օրը նա առիթ դարձաւ մի քանի անպատուութեանց համար, որ պատահեցաւ կանթեղինց տանը . . .

Երկու օր փեսէն էլ չերևեցաւ։ Բարբարէի սիրտը շուռ էր գալիս. նա ծառայն ծառայի յետևից ուղարկում էր փեսայի տունը, նրանց ափալը իմանալու։ Փեսան այն երկու օր մի անօրինակ դրութեան մէջն էր. նա չէր կարողանում խելքի գալ ու հասկանալ իւր հարսնացուի խօսքերը. թէ ինչու էր նա թագցնում նորանից քրոջ մասին, մտքերը գլխին փետելով, անհամբերութեամբ ման էր գալիս իւր սենեակում։ Այս դրութեան մէջ նորան վրայ հասաւ նորա պառաւ մայրը և գոչաց։

—Ինչ է պատահի, վուրդի, այլայլուած գոչեց պառաւը։ Երիտասարդը մի քանի րոպէ տատանման մէջ էր, վերջապէս յայտնեց իւր մօրը, թէ ինչ է պատահել նորան։

Պառաւ կինը թափ տուեց իւր ձեռքերը և հեգնօրէն բացագանչեց։

—Ի՞նչ ......խօ էլ հէնց գիտէի զարբ մէկ բան է պատահի......թէ տեսած էլ լինէիր......մէկել քուիրը, ինչ անենք......նա ջէր երևեայ է, ինչ յիշելու է նա, վուր էտէնց սրտից դիրել է հարսնացուիդ խօսքերը...... այնուամդ մի դցի, վուրդի ......գնա քու բանդ տես ......ու չուտով քու պառաւ դէդիտ արժանացրու քու պսակին։

Նորափեսէն համոզուեցաւ մօր խօսքերից և նորից սկսաւ ման գալ կանթեղինց տուն։

Նա միշտ նստած իւր հարսնացուի հետ մի անօրինակ դրութեան մէջ էր լինում. ամեն ժամանակ դուռը կլաղխէին, թէ որմին տուն կմտնէր, նորա ուշադրութիւնը այն կողմ դարձած պէտք է լինէր. նա ում որ սպասում էր միշտ։ Կանթեղինց Բարբարէի սուր աչքերից չը թագ կացաւ փեսայի այս դրութիւնը և որպէս թէ աւելի մեծ փորձանքից մէջ չձգել իւրեանց և փեսային, նա սկսաւ աւելի և աւելի չտապեցնել հարսնիքի օրը։

—Մարինէ, ասում էր մի օր իւր մանրիկին Բարբարէն, գնա չուստ փեսինց տունը, իմացուր ասա, թէ էլ մի ուչացնէք, ասա, բանը, քօթայ արէք, պրծէք, ջէհէզները միկը պին։ Էն տղէն էս վերջի օրերը աչքումս շատ փոխուած իմ տեսնում, մէ բան չըլայ մեր գլխին ու բաղդներս դուս կարելու չգայ։

—Ինչխէն է, աղջիկ սպարին, համ ջաղօ արած չէ, ձեռքը դնչին դնելով, զարմանքի արտասանեց Մարինէն։

—Հա . . . ի՞ն . . . ջաղօ արած կի չէ...... գոչեց կասկածանօք Բարբարէն և յետոյ ձայնը ցածացնելով հարցրեց, դուն հաստատ գիտիս, վուր փեսէն Սօփօյին չէ տեսի էն քանի մի օրում, Մարինէ,

—Աւետարանի վրայ երդում կուտամ . . . ամա վուրդի կուտեննէր չէ՞ս, աչքէս մէջ էր թախ կեցած, նրա գալուն հօ, դռները վրէն դցիմ կոխսում իմ . . . ։

Երկար չտևեց Բարբարէի միջնորդութիւնը խնամոց հետ, հարսանիքի օրը շուտ նշանակելու մասին։ Խնամին ինքն ուզում էր, որ շուտով իւր միակ որդու հարսնիքը տեսել էր ու յետոյ մեռնէր, որովհետև արդէն մի ոտով գերեզմանի էր նայում։ Նշանակեցին հարսնիքի օրը. երկու կողմից էլ պատրաստութիւն տեսան։

Հարսանիքից երկու օր առաջ կանթեղինց մեծ զօնալուխ սարքեցին. բաղնեսում, ճաշով ու թէյով, մօտ քսան հոգի իւր ազգականներից և բարեկամներից հրաւիրած ունէին։ Մեկիբուց բաղնեսի բոլոր զօրուզները մէկ օր նրանք ունէին բռնած։

Փեսան, որ չգիտէր թէ բաղնիս են գնացել իւր հարսնացուն և բարեկամները, երեկոյեան հօթի ժամին եկաւ կանթեղինց տունը։ Դրսում ոչով նրան չպատահեցաւ, մինչև եկաւ սանդուխտների վերայ և ինչ էր նորա զարմանքը, երբ պատշգամբի վերայ նա երես առ երես պատահեցաւ Սօփօյին։ Մի քայլ յետ դրեց փեսան և երկար հայեացքը ձգելով աղջկայ վերայ, նայում էր զարմացած նորա վերայ, աչքերը չթօթափելով։ Սօփօն ժպտաց . . . երիտասարդը աւելի խառուեց. արիւնը խփեց նորա թշերին։

Ձեր հարսնացուն տանը չէ . . . փեսայ, վերջապէս ձայն հանեց Սօփօն, նայելով փեսային նոյն թափանցող ժպիտով և աչքերի խորամանկ և սուր հայեացքով։

Այս ձայնից երիտասարդ տղան աւելի ուժից ընկաւ. այս ձայնը հնչել էր նորա ականջին այն օրը, երբ նա անցկենալիս կանթեղինց տան մօտով, տեսաւ մի սիրուն աղջիկ պատշգամբի վերայ և լսեց այդ ձայնը աղջկայ բերանից, ուղղած դէպ ի մի աղքատ կին, որին թեան ընտրականներին: Մենք այս համոզմունքին եկել ենք այն պատճառաւ, որ ահա արդէն մէկ տարի է, որ առաջարկած է ջրանցքի և գազի հարցը, բայց դարձեալ ոչ թէ ընտրողները ստիպում էին գործին վերջ տալու, այլ մինչև անգամ նշանակած նիստերին խմբովին ներկայ չէին լինում. ընտրականների ¹/₃ մասը հազիւ է գտնւում, որ կարելի լինէր գործը սկսել: Տարաբաղդաբար միևնոյնը պէտք է ասել գազի և ջրանցքի համար նշանակած յանձնաժողովի անդամների մասին, որոց հաւաքելն էլ մեծ դժուարութիւն էր ներկայացնում. գործին շուտով վերջ տալու համար հարկաւորուած էին սախազդական միջոցներ գործ դնել: Վերջապէս որպէս և իցէ յանձնաժողովը եկել է այն եզրակացութեան, թէ պէտք է վեր առնել Օդեսայի համար կազմած ջրանցքի կանոնադրութիւնն և բառ առ բառ այնտեղից արտագրել Թիֆլիզի համար, մինչև անգամ առանց յարմարեցնելու քաղաքին: Այս վերջին հանգամանքին վերայ Թիֆլիզի տեխնիքական ընկերութիւնը մատնացոյց է արել, անելով իւր առաջարկութիւնը այդ թերութիւնը լրացնելու համար:

Այս կարգադրութեան հետ յանձնաժողովը երկար քննելուց և մտածելուց յետ որոշել է՝ նախ քաղաքային վարչութեան հարկաւոր է տեղեկանալ ջրանցքի և գազի հարցերի մասին, անելով սորա համար մանրամասն հետազօտութիւնք և ապա տալ այդ գործը կատարելու համար մասնաւոր ընկերութեանց: Այս հետազօտութիւնքը յանձնաժողովի կարծիքով կարժենան քաղաքին աւելի քան 10,000 ռ., որ յետոյ կվերադարձնէ ամբողջութեամբ այն մասնաւոր ընկերութիւնը, որ յանձն կառնէ այս ձեռնարկութիւնը: Այս գործի մէջ շատ անձանց և ընկերութեանց միջոց տալ մրցութիւն անելու յանձնաժողովը կարծում է թէ տեղական և թէ օտար երկիրների օրագիրների միջոցաւ յայտնել իրաւունք ամենեցուն քաղաքային վարչութեան ծանուցմամբ, թէ նա քաղաքի ջրանցքի և լուսաւորութեան ձեռնարկութիւնը տալու է ուրիշներին և սորա համար նշանակել 3 կամ 6 ամիս ժամանակ:

Այս էր յանձնաժողովի վերջին խօսքը և մինչև ամսոյ 10-ը գործը այս դրութեան մէջ էր: Նոյն օրը գործի այս դրութեան մասին զեկուցումն անելուց յետ, քաղաքագլուխը, յանձնաժողովի վերջին խօսքը քննելու փոխանակ, յայտնեց ընտրականների ժողովին, թէ նա այս տարի ստացել է մի քանի մասնաւոր ընկերութեանց առաջարկութիւն, որ ուղղակի վերաբերում են այս գործին: Եւ յետոյ մի առ մի ներկայացրեց ժողովին մասնաւոր ընկերութեանց արած առաջարկութիւնքը:

ա. Պ. Պ. Գերսևանովը, Ստէրնիցկին, Զեյդմանը, Պրիւեմանն և Լօուը առաջարկել էին տալ իրանց ջրանցքի ձեռնարկութիւնը 59 տարի ժամանակով քաղաքի դրամական 25000 ռուբ. երաշխաւորութիւնով: Սոքա պարտաւորվում են տալ քաղաքին սկզբում օրական 500000 վեդրօ ջուր և յետոյ այս քանակութիւնը նոքա աւելացնելու են ըստ պիտոյից և կարեաց: Քաղաքի պիտոյից համար, որպէս և հիւանդանոցի համար, հրդեհների ժամանակ, ընկերութիւնը ձրի է տալու քաղաքին ջուր և սորա համար փողոցներում ամեն մի 50 սաժենի վերայ շինելու են կռաւան և քաղաքի մի քանի տեղերում երեք չատրուան. Քաղաքին իւրաքանչիւր տասը վեդրօ ջուրը տալու են 1 կոպէկով, իսկ մասնաւոր անձանց 5 վեդրօն 1 կոպէկով:

բ. Պ. Բոլաչովը, Շվարց ֆօն Դեզենի Մօրի կողմից կամեցաւ յանձն առնուլ այս գործը 49 տարի ժամանակով քաղաքից 100,000 ռ. դրամական երաշխաւորութեամբ: Սա իւրաքանչիւր 8 վեդրօ ջուրը ծախելու է քաղաքին 1 կոպէկով, իսկ մասնաւոր անձանց իւրաքանչիւր 5 վեդրօն 1 կոպէկով:

Եւ գ. Քաղաքագլուխը յայտնեց ընտրականներին մի այլ առաջարկութիւն, որ արած են նորան մասնաւոր կերպիւ մի բանկային հաստատ անգլիական առևտրական տանից շատ և շատ օգտաւէտ պայմաններով, առանց որևիցէ երաշխաւորութեան քաղաքիս կողմից. բայց մի ամիս ժամանակ խնդրում է նորան սպասելու, մինչև որ պաշտօնական կերպիւ ստացվի նորանից այն առաջարկութիւնը:

Այս հիման վերայ քաղաքագլուխը առաջարկեց ժողովին սպասել մի ամիս և ջրանցքի գործը առժամանակ յետաձգել, նա մանաւանդ, որ շուտով սպասվում է քաղաքին ինքնակառավարութիւն տալը, և մեր ընկերութեանց տալ մի քանի տարի ժամանակամիջոց և մեծ երաշխաւորութիւն անհարմարաւոր է:

Իսկ ինչ որ վերաբերում է գազային լուսաւորութեան հարցին, քաղաքագլուխը առաջարկեց ընդունել այն առաջարկութիւնը, որ ընդհանուր ժողովը յարմար կ'գտնէ: Գազի համար առաջարկութիւնք արած են միևնոյն ընկերութիւնք յետագայ պայմաններով:

Պ. Գերսևանովը և ընկ. ամեն մի լապտերի լուսաւորելու համար ուզում է 20 ռ. Բոլաչովը 20 ռ. և 50 կ., իսկ քաղաքին միևնոյն բանը այժմ նստում է 22 ռ. և այժմեան լապտերի լոյսը կարելի է ասել, որ գազից վեց անգամ փոքր է:

Այսպէս բաժանուեցան այս երկու ձեռնարկութիւնքը միմեանցից, թէպէտ յանձնաժողովի կարծիքով այդ երկու ձեռնարկութիւնքը պէտք է համարուին անբաժանելի և նախ քան տալ որևիցէ անձին այդ երկու գործերի համար քաղաքը պարտաւոր է հետազօտութիւնք անելու: Այս մասով և ժողովի անդամները արին իւրեանց առաջարկութիւնքը: Բայց ձայների բազմութեամբ վճռեցին չտալ 10,000 ռ., որ յանձնաժողովը ուզում էր տալ առաջին հետազօտութեանց համար. իսկ նորա երկրորդ առաջարկութեան մասին, վճռեցին անել ծանուցումն թէ տեղական լրագիրների և թէ Ֆրանսիական, Անգլիական և Գերմանական լրագիրների միջոցաւ, վերջին անգամ յայտարարութեան լրագրի մէջ տպուելուց յետոյ, 6 ամիս ժամանակամիջոց տալով ցանկացողներին առաջարկութիւնք անելու:

Այսպէս գործը կարելի է ասել ոչ թէ առաջ քայլեց, այլ մի քանի ժամանակով յետաձգվեցաւ:

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի):

Անցեալ նամակս 1) ես վերջացրի նորանով, թէ ինչպէս վարուեց Հայի տանը թուրք բժիշկը աչքացաւի հետ, բայց նամակիս երկայնանալու ցանկալով ոչինչ չասացի միւս քանի մի տեսակ հիւանդութեանց բժշկելու եղանակի վերայ, որ գլխաւորապէս լինում է գերդաստանի ծեր անդամների ձեռքով, ըստ մեծի մասին կին մարդկանց:

Ըստ հասարակ հիւանդութիւնը նոր բռնկելիս հիւանդի մայրը մի մեծ կտոր խմոր կտայ նորան ասելով, թէ «քսիր ջանիդ ցաւին» հիւանդը և խմորը իւր մարմնին քսելուց յետոյ վերադարձնում է մօրը, որ բաժանելով խմորը եօթն հաւասար մասի՝ դցում է թոնիրը նորանից գնդաձև շինելուց յետոյ. և ապա ինքը ուշադրութեամբ սպասում է թէ երբ արդեօք այն եօթն խմորագնդերից մինը պէտք է ձայն արձակելով տրաքի, որ ապա ինքը անէ իւր գուշակութիւնը. Եթէ պատահեց որ տրաքեց, իսկոյն կասէ «որդուս աչքով են տուել, բան չկայ, շուտով կանցկենայ կապաւինի թուրք բժիշկների ու բժշկուհիների օգնութեամբ:

Եթէ մինը հիւանդացաւ միւսից յետ հիւանդութեամբ վարվում են և այսպէս. մայրը կանգնում է կտրան վերայ ու գոչում ասելով. թէ «մեր հիւանդի գէշը ինչ առ ինչ տեսակ կերակուր որ ասում է, նորան իւր գրպանն, եփում է նա ու ապա դաւթով բերում ու հիւանդի երկու կողքին լափելուց գնում է առաջը, որ ուտէ:

Երեսի վերայի բշտիկների կամ ինչպէս Նախիջևանցիք ասում են ջիջռուկի բժշկութիւնը լինում է երկու տեսակ:

Առաջին այսպէս է կատարվում առաջին տեսակ բժշկութիւնը. հիւանդի մայրը հաւաքելով տան 2) առաստաղից սև մուրը, որ գոյացած էր նորա մշտական կերակուր եփելուց այնտեղ, բերում խառնում է հինայի և ձէթի հետ ու նորանով օծում է հիւանդի երեսը: Մի քանի օրից յետոյ երբ տեսնում է, որ չօգնեց այդ միջոցը, դիմում է բժշկութեան երկրորդ ձևին: Ջիջռուկի բժշկութեան երկրորդ եղանակն է լինում. վեր են առնում չախմախի քարը մօտեցնում են նորան հիւանդի երեսի բշտիկներին և քանի մի անգամ նորանից կրակ հանելով աշխատում են կպցնել չախմախի կայծերը բշտիկներին և ապա երբ յաջողում է այդ, փորձը դադարեցնում են: Այս փորձը անում են նոքա շաբաթը երեք անգամ՝ երեքշաբթի, չորեքշաբթի և շաբաթ երեկոները աշխատելով վերջին փորձը գցել երեքշաբթի երեկոյին, որ միւս օրը, այսինքն լոյս չորեքշաբթի, որին նոքա ասում են չէք չորեքշաբթի՝ հիւանդութիւնը չքանայ բոլորովին.

Հազ ունեցող մարդուն բժշկում են այսպէս. անց են կացնում նորան երեք անգամ էգ էշի փորի տակից և կամ ծակում են ասեղի կոթը ու կրկին երեք անգամ անց են կացնում նորան այն անցքից: Բողազացաւը, կամ ինչպէս Նախիջևանցին ասում է, կուլերի գալը հետևեալ ձևով են բժշկում. վեր են առնում երկու դուրս համար պատրաստուած առանձին բարակ փայտերը խրում են հիւանդի կոկորդը ու մի փոքր ժամանակ այս և այն կողմն տանելուց յետոյ հանում:

Ատամնացաւ ունեցողը օձի շապիկը ծխախոտի փոխանակ գնում է չիբուխի մէջ ու քաշում:

Քանի մի խնդիրներ ևս օձի շապիկը գլխարկի մէջ դնելով՝ ասում են «մազերը կերկարի»:

Մ. Տէր Սարգսեանց:

---

1) Տես «Մեղու Հայաստանի» № 12 1873.

2) Տան Նախիջևանցիք ասում են միայն այն տեղին, որտեղ շինուած է նոցա հաց թըխելու թոնիրը և կերակուր եփելու տեղը:

«Մշակը» լսել է, որ կովկասեան ուսումնական հոգաբարձութեան մէջ շուտով նիստեր պիտի սկսուին, որտեղ կքննուի տարրական ուսումնարանների և ժողովրդական ուսուցիչների հարցը:

Նոյն լրագրին հաղորդում են Սուխում-Կալէից, թէ նորա քաղաքում ծառայող Թիֆլիսեցի երկրաչափ Մ. Պ. Դու.......բեանց յայտնի չէ ինչ պատճառաւ ամսիս 18-ին անձնասպանութիւն է գործել, զարկելով ատրճանակով կոկորդը: Թէև բժիշկները գտան նորան դեռ ևս կենդանի, բայց հնարները իզուր անցան, և նորա անասելի չարչարանքներից յետոյ վախճանեցաւ:

«Спб. Вѣд.» լրագիրը լսել է, որ ազգային լուսաւորութեան նախարարութեան մէջ կազմուել է առանձին յանձնաժողով ստորին և միջին ուսումնարաններում կարգապահական միջոցներ կարգաւորելու մտքով:

Ամսոյ 1-ին կայացաւ բարձրագոյն հրաման Ստավրոպօլի գիմնազիոնի աշակերտաց դրամագլուխ կազմելու մասին: Ստավրոպօլի գիմնազիոնի մանկավարժական խորհուրդը ուսում աւարտող աշակերտներին օգնելու նպատակաւ, որ նոքա չքաւորներին իւրեանց ուսումը շարունակեն, միջնորդեց գիմնազիոնում կազմել մի դրամագլուխ, որ գոյացել էր աշակերտների երաժշտական և դրամատիկական երեկոներից և զանազան նուիրատուութիւններից, անուանելով նորան «Ստավրոպօլի գիմնազիոնի աշակերտական դրամագլուխ Տայնի Սօվետնիկ Նիկոլաևի»:

«Голосъ»-ին գրում են, որ կովկասի փոխարքայի գլխաւոր վարչութեան քննութեանը առաջարկած է անդրկովկասեան քաղաքների միջնորդութիւնը կանխեցնել գիւղատնտեսական ուսումնարան բանալու մասին:

Ամսոյ 14-ին նշանակված էր քաղաքային վարչութեան դահլիճում նիստ առևտրական դատարանի հարցը լուծելու համար, բայց նիստը չկայացաւ, որովհետև անդամների մի երրորդ մասը անգամ չժողովեցաւ: Այս երևոյթը ապացոյց է մեր ժողովրդեան անտարբերութեան իրանց հասարակական շահերի վերաբերութեամբ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Спб. Вѣд.», լրագրի № 120 առաջնորդող յօդուածը նուիրած է Եւրոպայի այժմեան քաղաքական դրութեանը: Յօդուածը սկսում է յետագայ խօսքերով. "Ըստ երևոյթին ամենայն բան Եւրոպային երկար և հաստատ խաղաղութիւն է խոստանում:" Սորանից յետոյ ճշում է Եւրոպայի տէրութեանց դրութիւնը հետևեալ խօսքերով. Թէպէտ Ֆրանսիան վերջին պատերազմից արդէն մեծ արագութեամբ կազդուրվում է և ամեն ուրեք դարձեալ լսվում են «վրէժխնդրութեան» ձայներ, սակայն այս րոպէիս Եւրոպայում կորցրած է նա իւր առաջուայ հրամայական ազդեցութիւնը: Անգլիան Գրիմի պատերազմից յետոյ բոլորովին չեզոք տէրութիւն

մի կտոր հաց ձգեց նա իւր կանգնած տեղից «փէնջ բաց արա, դէգլի» այս կարճ խօսքերը միայն հնչուեցան օդում, բայց թէև կարճ էին նոքա, բայց ազդու և յաղթող: Երիտասարդ տղայի վերայ, որ շատ անգամ ճանապարհորդած էր, Եւրոպայի շատ քաղաքները այցելել էր և շատ աղջիկներ տեսած և նոցա ձայնը լսած էր, այնքան մեծ և զօրեղ ազդեցութիւն ոչ ոք չէր արել, ինչպէս որ Սօֆօն այն կարճ պարբերութեամբ և բարի և զուարթ հայեացքով, որով նայեց այն ժամանակ այն կնոջ վերայ: Չէր մոռացել նոյնպէս և այն բարի մաղթանքները, որ ուղղեց կինը դէպ ի Աստուած, խնդրելով նորանից Սօֆօյի համար բաղդ, առողջութիւն, հարստութիւն և այս բոլորը մի կտոր հացի համար:

Այժմ երիտասարդի յիշողութեան մէջ այն պատահմունքը մի առ մի նորից զարթեցաւ և սկսեց սաստիկ խռովել: Ահա նորա առաջ կանգնած է մի օրիորդ, որ շատ նման է նորա հարսնացուին, Զարմանալի նմանութիւն: Երեսի միևնոյն գծագրութիւնն ահա, իւր հարսնացուի այն կարմիր այտերը, որ այնպէս սիրով համբուրում է. բայց մի բան աւելի է այտերի մէջ, մի փոքրիկ կլոր խալ մէկ թշի վերայ և մի փոս միւս թշի վերայ, որ ծիծաղելիս աւելի և աւելի խոր է դառնում. ահա և նորա բարակ ծնօտը և սուրած քիթը, բայց սորա վարդագոյն շրթները միշտ ժպտալու պատրաստ՝ մի առանձին հրապոյր են տալի աղջկայ բոլոր դիմագծութեանը, ահա վերջապէս և այն սևորակ ու մեծ կապ աչքերը պատած կամարի նման բարակ ունքերով. բայց սորա աչքերի մէջ աւելի շատ կեանք կայ. սորա կրակ են թափում և ծածկում մարդու սիրտը, հոգին գրգռում մի գերբնական շնորհօք և քարշում դէպի ինքը ամենայն էակին:

Նոյնպէս զմայլած երիտասարդ տղան աչքերը մի կետին մեխած անշարժ կանգնած մնաց տեղում: Սօֆօն, որ մինչև այժմ հետաքրքրութեամբ նայում էր իւր քրոջ փեսացուին, փոխեց իւր դրութիւնն ու ցաւօք սրտի հետևում էր նորա ամեն մի շարժմանքին:

Աղջիկը հասկացաւ, որ երիտասարդ տղայի սրտի մէջ մի բան է պատահում . . . առաջին անգամ նա մտածեց, թէ տղան չէր սպասում, որ նա իւր հարսնացուին չէր գտնիլ տանը, ուստի և զարմացաւ, և անբաւական մնաց, բայց երբ որ տեսաւ թէ նորա հայեացքը չէ արտայայտում ոչ զարմանք և ոչ անբաւականութիւն, այլ մի զարհուրելի և մի և նոյն ժամանակ անտանելի երևոյթ, նա փախեցաւ և չտալով տուն վազելու:

Երիտասարդ փեսան այլայլուած երկու ձեռքով գլուխը բռնած դուրս նետուեցաւ Կանթեղենց տանից և վազեց տուն: Երբ դուրս էր գալիս փողոց պատահեցաւ նրան Կանթեղենց ծառան, չալակած բաղնիսի բողչան և ձայն տուեց նորան.

—Աղա, էս սահաթիս գալիս են:

Բայց փեսան չէր լսում նորան, նա քայլերն աւելացնելով, համարեա վազէ վազ հեռանում էր այն տնից.

Նոյն գիշերը սաստիկ տաքութիւն տուեց նորան, բայց տնային միջոցներով և պառաւ մօր աղօթքով միւս օր ոտքի կանգնեցաւ, թէպէտ բոլոր նորա մարմնոյ մէջ նշմարվում էր թուլութիւն:

Հասաւ հարսանիքի ժամանակը: Կանթեղենց տանը մեծ աղմուկ ու չափ բարձրացաւ, ով որ կար ոտքի կանգնեցաւ.

Սենեակները աւելում էին ու մաքրում, կարգի բերում ու զարդարում. Նորահարսի թագի տակի շորը պատրաստում ու միւս աղջիկներից զուգերը վրայ հասցնում: Սօֆօն ամենից շատ աշխատում էր այդ ժամանակ. նա անդադար լսում էր իւր քոյրերից ուրախ ուրախ հրամանքներ շորերը շուտ պատրաստելու մասին, և կարը ձեռքից չթողած ինքն ևս ուրախ պատասխանում էր. թէ «լու համիք, հա»:

—Աղջիկ պարուն, Սօֆօյին ինչ իս ուզում անիլ . . . գոչեց Մարինէն, դառնալով Բարբարէին . . . Նատօյի հին ավլի դէրիէն թող գալայ անէ ու իրա համա շինէ ու հագնէ հարսնիքի գիշերը:

—Ինչ սրա տիղն է, վուր մէ տիղ վէր նըստնի ու քնի, դանա չիս գիդի դրա խասիաթը, ով ունէ դրա գլուխը. թող էն գիշերը մամիկենց տունն մնայ, իր համա խալվաթ էնդի կու քնի, ասաց Բարբարէն գլուխը կարից վեր չքաշելով:

Սօֆօն կարմրեց, նա տխուր նայեց իւր չորս կողմը ու տեսաւ իւր քոյրերին ծաղրածու կերպարանքը, որով այս ժամանակ նայում էին նորան, նա դողաց բոլոր իւր մարմնով աւելի ցած կախ գցեց գլուխը կարի վերայ, պռօշները կծոտելով. փորձով լաւ գիտէր, որ աւելորդ խօսքի համար, կամ թէ մօր առաջ ընդդիմութիւն ցոյց տալու համար, կարող էր ինքն իրան աւելի մեծ նեղութիւն պատճառել. Նա լռեց, բայց սիրտը խիստ էր չուա գալիս ու անխնայ բաբախում նորա լայն կրծքի մէջ.

Հազիւ արտասուքը աչքերում պահելով, նա զգում էր իրա մէջ այն ալէկոծութիւնը, որ տեղի տուեցին նրա սրտի մէջ մօր վշտական խօսքերը. աչքերը մթնեցան, բայց սա շարունակում էր իւր գործը. որովհետև մօր աչքը անդադար նորա վերայ էր և նա սարսում էր նորան գործը ժամանակին վերջացնելու. Նոյն երեկոյ Բարբարէն և Մարինէն առանձին սենեակում նստած յետագայ խօսակցութիւն ունէին իրանց մէջ.

—Ի՞նչ կասէիր, վուր Սօֆօյին հարսնիքն էիր ձգում. ինէնց էլ սիրտս կէս է ըլում, գուրձը համաչա ջանդրելուց ու ոտթօ քսելուց բեզարեցայ հոմ իս . . . մէ Նատօյին պսակինք պրծնինք.

—Հոմ պրծած է. աղջիկ պարուն, էլի ինչ իս վախենում:

—Սատանէն գիդէ հիմիկուայ աղերանց բանը, մէրաչ վէր կենայ ու ասի թէ չիմ ուզում նրան, տուէք ինձ էն քածին . . . իմում, էդ հոմ բողազը դուս կթռաւեցաւ. Ցեաց փոքր ժամանակից յետոյ Բարբարէն աւելացրուց: Քանի ու քանի աշխատեցինք, վուր նրան էն աղէմէն թախ կացնինք, չէլաւ, սատանական հինց էս օր, երբ մենք տանը չէինք, վուրդի եկաւ նա էլ.

—Արա ասում իմ էհ, Մարինէ, էն օրը նրա ոտը պէտք է կտրիս ու էղանից ռադ անիս.

—Նրան էլ ինչ էլաւ, գէթ ադամանէթ . . . ինչ տեսաւ էն քածի մէջ, վուր էսէնց չլէլ է լմնդի տղէն, ասաց նախատանօք Մարինէն.

—Աչք է . . . մէ չէր տեհէլ է, դուր է էկէ; սրա կու թողնիմ, վուր մինձը տանը նստած, Նատօյին տանը թողած ու էն քածին մարդու տամ . . . չէր մէքիչ էլի մուլախ տայ.

Հարսանիքի գիշերը տասնուհինգ տարեկան Սօֆօյին, որ բացուած վարդի էր նմանում իւր գեղեցկութեամբ հեռացրին տանից և դրկեցին, ինչպէս զարդ ու զուգից, նոյնպէս և քրօջ հարսանիքի ուրախութիւնից:

Նոյն օրը երբ Կարապետը չտեսաւ Սօֆօյին աղջկերանց մէջ հարցրուց իւր կնոջը.

—Սօֆօն վուրդի է, Բարբարէ, չիմ տեսնում նրան էստի.

—Քու քուր Սալօմի տունն գնաց, չիմ ուզում կասէ; հոմ գիդիս, Սօֆօն ինչ պարիկչա աղջիկն է, ասաց Բարբարէն չտալով ու հեռացաւ մարդուց: Շտապով գլուխ բերած հարսանիքը շտապով էլ անց կացաւ. Բարբարէն մինչև փեսայի գալը ու աղջկան եկեղեցի տանելը չէր հանգստանում ոչինչ, այնքան անհանգիստ էր նորա սիրտը: Այլայլուած տխրթնած Գէորգին—նորափեսին շտապով տարան եկեղեցի և շտապով էլ պսակեցին: Եւ միայն այն ժամանակ Բարբարէն ազատ շունչ քաշեց և միայն այն ժամանակ նորա դէմքի վերայ երևեցաւ ինքնահաճոյ ժպիտ և բաւականութիւն.

Նա ամբողջ գիշեր փեսայի տանից էր՝ մտն գալիս և նրան քաղցրալի խօսքեր ասում:

—Բէմէն ինչ թաքցնիմ, փեսայ ջան, քչփչում էր Բարբարէն Գէորգի ականջին, հօրէսիդէնը դուն էլ մէր վուրդի պէսի յիչուիս. դուն Սօֆօյի համար անմիղ էիր նեղանում. նա քի համա յայիղ կնիկ չէր ըլի. դուն ինձմէն իմում շնորհակալ կուլիս, էն հանդի աղջիկ իմ տալի քիզ, վուր չէլած: Փեսան չէր լսում ոչինչ, նա աչքով ում որ պտռում էր հանդիսականների մէջ, և երբ նա իւր որոնած էակին չտեսաւ այն տեղ, աւելի և աւելի տխրեց, ինչու չտարիցան վերջ տալու հարսանիքի խնջոյքին:

Վերջ առաջին մասի

Ա. Ք.

դարձաւ. Բէլգիան ապահովեց իւր կեանքը վտանգող հարեւանից։ Հոլլանդիայի վերաբերութեամբ վերջին պատերազմում գերմանիան ապացուցեց, թէ չունի ոչինչ ցանկութիւն զրկել այս փոքրիկ երկիրը անկախութիւնից։ Դանեմարքը ապահով է առած։ Շվէտիան և Նորվէգիան վաղուց է Եւրոպայում ոչինչ դեր չեն խաղում։ Այն օրից երբ Սպանիան հարկադրեց Ամէդէյ թագաւորին հեռանալու, Եւրոպայի անջատված կտորը դարձաւ և մինչև անդամ չէ կարող լինել որևիցէ արուեստական միջոց Եւրոպայի պատերազմի համար։ Իտալիան միացած է և ոչինչ չէ կամենում բացի հանգստութիւնից։ Մէկ խօսքով արևմտեան և հարաւային Եւրոպայի մեծ մասում յաղթող համաձայնութեան [illegible]։ Այլ են միում են երեք մեծ Եւրոպական տէրութիւններ՝ Գերմանիան, Աւստրիան և Ռուսաստանը։ Սոցա վերաբերութեամբ կասկածել անգամ չէ կարելի, որ նոքա ունին խաղաղ դիտաւորութիւններ և առհասարակ համաձայն են ամեն հանրաեւրոպական քաղաքականութեան գլխաւոր հարցերի մէջ. ուրեմն կայ խաղաղութեան երաշխաւորութիւն։

Մի կէտ միայն կայ, որ սպառնում է Եւրոպայի խաղաղութեանը, այս կէտը Տաճկաստանն է։ Վաղուց է արդէն Տաճկաստանը վարանեալ դրութեան մէջ է և նոքա, որոնք չեն խնայել ոչ փող և ոչ արիւն Օսմանեան տէրութիւնը պահպանելու համար, չեն մոռանել երբէք այս վերջինի ինքնագոյութեան մասին, այլ ունեցել են միշտ նպատակ իւրեանց ազդեցութեան ենթարկել նորան։ Այս ցանկութեանը նոքա հասան Ֆուադ փաշայի և Ալի փաշայի միջնորդութեամբ, որոնք ստանալով իւրեանց դեսպանագիտական կրթութիւնը Փարիզում և Լոնդոնում հակում էին դէպի արևմտեան Եւրոպան ամեն ժամանակ, երբ Տաճկաստանը դժուար դրութեան մէջ էր ընկնում։ Ֆուադ և Ալի փաշաների մահից յետոյ, երբ Ֆրանսիայի և Անգլիայի ազդեցութիւնը արևելքում պակասեց, Տաճկաստանը կորցնելով իւր ղեկավարներին և ուղեցոյցներին հակեցաւ դէպի Ռուսաստանը, որի դեսպանի ազդեցութիւնը օր ըստ օրէ աւելացաւ Պօլսում։ Չպէտք է կարծել, որ Ռուսաստանը չունի ախոյեաններ արևելքում. այլ ընդ հակառակն առաջուայ ախոյեաններին աւելացաւ այժմ և Գերմանիան։

Այսպէս ուրեմն, եթէ Եւրոպական զօրեղ տէրութիւնները ստիպուած լինեն խառնուելու արևելեան հարցում, անշուշտ Ռուսաստանի դէմ առ դէմ կարձանանայ Պրուսիան։ Հարցը միայն ժամանակի մէջ է։

Բոլոր հանգամանքները վկայում են, որ անցաւ այն ժամանակը, երբ Տաճկաստանը օտարների հովանաւորութեան ներքոյ կառավարվում էր անխռով, այժմ այնտեղի ժողովրդի մէջ օրէցօր զօրանում է ինքնակառավարութեան համոզմունքը։ Այժմ Տաճկաստանը կարծես մի հոգս ունէ միայն, այն է նշանակել որքան կարելի է խիստ նահանգապետներ սլավօնական երկիրներում, բայց յայտնի է որ ընդդիմադրութեան զօրութիւնը աճում է ճնշման հետ միասին. ուր ճնշումը հասնում է իւր վերջին աստիճանին, այնտեղ ժայթքում է [illegible]։ Գահաժառանգութեան հարցը, որ Սուլթանի մահից յետոյ մի նոր ոյժ է ստանալու, աւելի կզօրացնէ ներքին յուզմունքը, որ կործանիչ հետևանք կարող է ունենալ Տաճկաստանի համար. սորա առաջը ոչ թէ կարող է առնել Եւրոպական տէրութեանց զինու ոյժը, այլ ընդ հակառակն աւելի կզօրացնէ Տաճկաստանում խռովութիւնը, յարուցանելով Եւրոպական տէրութեանց մէջ հարց արևելքում ազդեցութիւն ունենալու մասին։,,

Յօդուածը վերջանում է յետագայ հարցով, որ մենք բազմիցս առաջարկած ենք՝ այն է «Մի՞թէ ամեն մի քաղաքական ախոյեանութիւն միայն պատերազմով է վերջանալու և չկայ քաղաքական շահերը հաշտեցնելու մի միջոց։»

ԻՏԱԼԻԱ

Պապի առողջութիւնը անհետև շատ վատ դրութեան մէջ է։ Մայիսի 1 ին նա 81 տարեկան դառաւ. կամենում էին այն օրը տօնել հանդիսաւոր կերպիւ. բայց այդ գլխաւորութիւնը հարկադրուած էին թողնել, որովհետև բժիշկները շարունակում են երկիւղ կրել Պապի կեանքի մասին և խորհուրդ են տալիս նորան փոխել այժմեան բնակութեան տեղը։ "Memorial Diplomatique,, ը Պապի մահից յետոյ ժողովվելու կօնկլավի (կարդինալների ժողովի) վերաբերութեամբ ասում է հետևեալը. «Եթէ Պապը վախճանի, պապական գահի վերաբերութեամբ օտար տէրութեանց առաջին հոգսը կլինի կօնկլավը ժողովելու տեղը նշանակել։ Որովհետև կարդինալներին այլ ևս չէ պատկանում մարմնաւոր իշխանութիւն, ուստի խաղաղութիւն պահպանելու, կարդինալների անձնապահպանութիւնն և պապի ազատ ընտրողութեան հոգսը պէտք է ընկնի իտալիայի տէրութեան վերայ։ Անկասկած նա կցանկանայ, որ ընտրողութիւնը լինի Հռոմում, թէպէտ խռովութեանց առաջն առնելու համար լաւ կլինէր դորա համար նշանակել Իտալիայի մի այլ քաղաք։ Սակայն այս հանգամանքում օտար տէրութիւնքը չեն համաձայնելու Իտալիայի տէրութեանը, միայն նոքա գործ կածեն իւրեանց իրաւունքը, առաջարկելով իւրեանց կանդիդատներին։ Առաջուայ ժամանակ այս իրաւունքը ունէին միայն Ֆրանսիան, Սպանիան, Աւստրիան և Պորտուգալեան, իսկ այժմ նոյնը պատկանում է նոյնպէս Իտալիային և Գերմանիային։ Առաջուց կարելի է ասել, որ այս դէպքում կկազմուի երկու կուսակցութիւն, աւելի ճիշդ է ասել—նոքա արդէն կազմուած են։ Վիէննայի և Բերլինի կառավարութիւնները ձեռք ձեռքի տուած առաջ են քայլում, միևնոյն շահերով կապած լինելով. նոցա հետ կմիանայ Իտալի, և Ռուսաստանը, այս գործի մէջ մասն ունենալով Լեհաստանի վերաբերութեամբ։ Միւս կողմից կմիանան արդէօք լատինական ցեղերը, այսինքն Ֆրանսիան, Սպանիան և Իտալիան, կամ թէ Իտալիան և Պորտուգալիան կմիանան առաջի խմբի հետ, դեռ ևս յայտնի չէ։ Ուղիղ է միայն, որ այս տէրութիւնքը գործ կդնեն իւրեանց իրաւունքը կանդիդատի առաջարկելումը։ Ցիշելով այն, ինչ որ ասում են դեսպանագիտական խմբերի մէջ, Բերլինի և Վիէննայի կառավարութիւնները բոլոր իւրեանց ազդեցութիւնն գործ կդնեն և չեն թողնել այնպիսի մի անձն, որ ծխականներին հաճոյ լինի և կաշկանդեն ընտրելու այնպիսի մի պապ, որ համաձայնի և պատուէ մարմնաւոր իշխանութիւնը, որը փոխարէն կստանայ եկեղեցական իրաւունքների պահպանելու ապահովութիւն նոցանից։ Իւրեանց սեպհական շահերի և խաղաղութեան համար յիշեալ կառավարութիւնները կպահանջեն բաժանել բոլորովին եկեղեցին տէրութիւնից։ Նոքա յուսով են, որ Իտալիայի տէրութիւնը ցոյց կտայ այս գործի մէջ բոլոր իւր գործակցութիւնը, որովհետև նորա համար մեծ նշանակութիւն ունի եթէ ընտրուի այնպիսի մի պապ որ հաշտուէր Կվիրինալի (թագաւորական պալատի) հետ և բաւականանար հոգևորական իշխանութեամբ։ Ադրիան պապից յետոյ, որ Ֆլանմանդացի էր, կանոն է դրուած, որ պապը Իտալիացի լինի։ Բայց այժմ, ինչպէս լսում ենք, Գերմանիան բողոքում է դորա դէմ, ասելով թէ դա վիրաւորում է միւս կաթոլիկ ազգերի կրօնական զգացմունքը։ Գերմանիայում մինչև անգամ ասում են, որ եթէ այս կանոնը գործադրուի, այն ժամանակ Գերմանիայի և Հռովմէական եկեղեցու մէջ երկպառակութիւն կառաջանայ։ Բացի այս. Գերմանացիք պահանջում են փոփոխութիւն կարդինալների ժողովի մէջ։ Գերմանական տէրութենական անձինք ոչինչ չունեն ասելու կարդինալների թուի դէմ, բայց գտնում են, որ նոքա հաւասարաչափ չեն բաժանուած այլ և այլ ազգերի մէջ։ Արտասահմանի կարդինալները ընդ ամենը 12 են, սոցանից մեծ մասը Ֆրանսիային է պատկանում, 2-ը Աւստրիային և միայն 1-ը Գերմանիային։»

ՖՐԱՆՍԻԱ

—**Փարիզ.** Ֆրանսիական լրագրութեան սկսել էին խօսել, իբր թէ գերմանական զօրքի Ֆրանսիայից դուրս գալու պայմանաժամը կարճացնելու մասին նոր բանակցութիւնք են լինում Տիերի և կոմս Արնիմի մէջ. բայց «Bien Publique» կիսապաշտօնական լրագիրը հերքում է այդ լուրը, աւելացնելով թէ ոչ մի կառավարութիւն չի թոյլ տայ իւրեան այսօրուայ ստորագրածը վաղը ջնջելու և նոր դաշն կապելու և թէ այդ լուրը տարածողները կառավարութեան թշնամիք են, որոնք մի քանի ժամանակից յետոյ կգրեն, թէ կառավարութեան ցանկութիւնը մեր հայրենիքը գերմանական զօրքից ազատելու պայմանաժամը կարճացնելու մասին եղած բանակցութեանց մէջ անյաջող և ապարդիւն եղաւ։ Սորանով նոքա կգրգռեն ժողովուրդը կառավարութեան դէմ և կաշխատեն այդ դժգոհութիւնից օգուտ քաղել անձնական շահերի համար։

—Ազգային ժողովի համար ընտրութեանց երկրորդ օրը, ապրիլի 30 ին ընտրվել են նոյնպէս բոլորը հանրապետականներից և մինը բօնապարտեաններից։

—**Վերսայլ.** Ներքին գործոց նախարար Գուլեարի և ազգային լուսաւորութեան նախարար Ժիւլ-Սիմոնի արձակուելը Տիերը ընդունեց ամսոյս 5-ին և առաջինի փոխանորդ նշանակեց Կազիմիր—Պերիէին։

—

—Ամսոյս 14-ից հեռագրալուրը հաղորդումէ, իբր թէ ազգային ժողովը հակառակ Տիերի և կառավարութեան վճիռ դնելուց յետոյ, Տիերը արձակուրդ առեց և նորա փոխանորդ ընտրվեցաւ Մարաջախտ Մակ Մահոնը։ Այս փոփոխութիւնը մեծ հետևանքներ կունենայ Ֆրանսիայի ապագայ դրութեան համար։

ԱՒՍՏՐԻԱ

—**Վիէննա.** Մայիսի սկզբից Վիէննայի բուրսայում (բիրժա) մեծ խառնակութիւն կայ այն պատճառով, որ բուրսայի վիճակը որոշողները անյաջողութիւն տեսան մի ամբողջ տարի յաջողութեան մէջ լինելուց յետոյ։ Գրեթէ ամենայն օր սնանկացողներ են լինում, կորչում են ահագին կարողութիւններ, տանելով իւրեանց հետ իւրեանց տէրերի բարի անունն և պատիւը։ Վնասուողներ շատ կան, մանաւանդ միջին կարգի մարդկանցից, որոնք զրկվեցան իւրեանց բոլոր կարողութիւնից։ Աւելացնենք այս թշուառութեանը և այն, որ թանգութիւն է այժմ—25 % բարձրացել են ամեն իրեղէնի գները։ Բոլորեցուն աչքը կառավարութեան վերայ է, որ նա օգնէ բուրսային այս դժուար հանգամանքում։ Ելևմտից նախարարը խոստացաւ կառավարութեան կողմից քննել գործը և աշխատել յաջողակ վերջ տալու դորան,

—**Կրակօվ.** Կրակովում կառավարութիւնը բացեց Լեհաց դիտութեանց ճեմարան։

—Հաւաստիանում են, որ Վիէննայի բուրսայի ճգնաժամը (կրիզիսը) մօտ 1000 միլիօն գուլդէն վնաս է պատճառել։

—Սնանկացան այս ահարկու խառնակ՝ ի թիւս այլոց Վիէննայի կոմմիսիօնէրներ, Բուրսայի և Վարկի բանկերը։

ՇՎԵԴԻԱ ԵՒ ՆՈՐՎԵԳԻԱ

—**Շտոկհոլմ.** Ապրիլի 30 ին Շվեդիայի և Նորվեգիայի Թագաւորի թագադրութիւնը կատարվեցաւ ներկայութեամբ օտար տէրութեանց լիազօր դեսպանաց, դեսպանագիտական ժողովի, երեսփոխանների և խուռն բազմութեան ժողովրդի։

ՇՎԷՅՑԱՐԻԱ

—**Բեռն.** Շվէյցարիայի դաշնակցական խորհուրդը Մադրիդի դքսուհուն (Դօն—կարլոսի ամուսնուն) և բոլոր կարլոսեանց գործակալներին արգելեց Շվէյցարիայի արևմտեան և հարաւային կանտոններում բնակվել այն պատճառով, որ դքսուհու ամարանոցի մօտ գտել են պատերազմական պաշարներ և զէնք և առհասարակ երևում է, որ կարլոսեանք Ժենեվան ընտրել են կենդրոն կարլոսեանց արշաւանքը պահպանելու համար։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Պարսից շահը ամսոյս 10-ին ժամանել է Ս. Պետերբուրգ և մեծ պատուով ընդունվել է։ Լրագիրը հաւաստացնում են, որ օրական ծախսի համար Ռուսաց կառավարութիւնը նշանակել է 15,000 ռ.։ Արտաքին գործոց նախարարութեան թարգմանչաց գլխաւորը Պ. Դամազեանը ուղարկվել էր Մոսկվա դիմաւորելու Նորին Մեծութիւնը և Պետերբուրգում լինելու է Շահի մօտ մինչ, քանի որ սա Ս. Պետերբուրգումն է։

—

Հեռագիրը հաղորդեց մի տխուր լուր՝ ականաւոր գիտնական Ջօն Ստիւարդ Միլլը վախճանուել է Ավինիօնում։ Միլլը ծնաւ 1806-ին Լօնդօնում։ Նորա հայրը մի նշանաւոր տեղ ունէր անգլօ—հնդկական ընկերութեան մէջ, ուր և մտաւ 1823-ին Ջօնը։ Մինչև 1858-ը նա մնաց ընկերութեան մէջ և ստացել էր իւր հօր պաշտօնը։ Այդ միջոցին կառավարութիւնը իւր ձեռքն առաւ Հնդկաստանի վարչութիւնը։ Լորդ Ստէնլին խնդրեց Ջօն—Միլլին չթողնել ծառայութիւնը, բայց Միլլը չը համաձայնեցաւ։ 1865-ին նա ընտրվեցաւ երեսփոխան և մինչև 1869-ը մնաց երեսփոխանաց ժողովում։ Ջօն—Ստիւարտը յայտնի է իւր բազմաթիւ գրուածքներով, մանաւանդ տնտեսական հարցերին վերաբերեալ։

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Պ. Շահվերդեանից նորա յօրինած «Նկատողական Ռուսումն» վերնագրով գիրքը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Մայիսի 18 ին

Ոսկին (պօլուիմպերեալ)	6—9
Արծաթը հին մանեթ	1—11
Փոխանակագիր (բարաթ) Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա	4—80
Փոխանակագիր Պարսկաստան	4—80
» » անգլիական լիրան	7—41
Առաջին 5% ատոր վիճակախաղով (լատարեյով) ներքին փոխառութեան տոմսակը	155.
Երկրորդը	153.
Բամբակը Երևանի, փութը	4—10
Ամերիկայի սերմից	7—
Տորոնը	9—
Որդան կարմիր առաջինը	85—
» » երկրորդն	48—
Մետաքսը Նուխու լաւը	170.
Բուրդը Թուշու	6—
Թարաքամի	3—
Շաքարը ռուսի	7-20
արտասահմանեան	8-40
Շաքարաւազը ռուսի	6—15
Ծխախոտը Տրապիզոնի լաւն	11-60
Սուրճը Մօկկայի	16-80
Բնաճարպի (ստէարին) մոմը	11-80
Երկաթը ձողաձև (բրուսկովի)	3-20
. . . . տախտակ (լիստովի)	3-90
. . . . մեխացու	2-50
Պղինձը անգղ.	16-10
. . . . տեղական	11—
Անագը (կլյեկ)	12—
Անուշադրը (նիշադր)	4-80
Աղը	—60
Պղպեղը	10-80
Լեղակը, առաջինը	160—
» » երկրորդն	112—
Ալիւրը հասարակ	1-40
Բրինձը Լենքորանի	2—25
Գարին	—90
Սպիրտը 81 աստիճանի վետրօ	4-20
Նաւթը	3-90
Ճրագուի մոմը	5-40
Օճառը (սապոն)	4-20
Իւղը	10—
Ձէթը կտաւատի	5-10
. . . . կնճիթի (քունջութի)	10—
Շիբը	2-40
Գզտոյն	10—
Արճիճն	2-70
Մեղրամոմ	27—
Խունկն	7-20

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԸ գնում է Թիֆլիսից Ռուսաստան և Ղուբանի գաւառները ամեն օր բացի կիրակի օրից։ Երկուշաբթի—Քութայիսի և Երևանի վերայ, նմանապէս Սուխումի և Չերնոմորի գաւառները։ Երեքշաբթի—Բաքուի և Գանձակի վերայ և նմանապէս Դաղստանի գաւառը։ Չորեքշաբթի—Քութայիսի և Ալէքսանդրապօլի վերայ և նմանապէս Սուխումի և Չերնոմորի գաւառները։ Ուրբաթ—Քութայիսի, Երևանի և Կախեթի վերայ և նմանապէս Սուխումի և Չերնոմորի գաւառները։ Շաբաթ—Բաքուի և Գանձակի վերայ և նմանապէս Դաղստանի գաւառը։

ՓՈՍՏԱՅԻ ԿԱՌՔԵՐԸ գնում են Թիֆլիսից Վլադիկավկազ և այն տեղից յետ են գալիս ամեն չորեքշաբթի և շաբաթ օրերը կէսօրից յետոյ 4 ժամին։

—

ՓՕԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔԸ Թիֆլիսից օրը երկու անգամ, առաւօտեայ 9 ժ. 30ր. և գիշերուայ 9 ժ. 30ր։ —Շոգեկառքը գալիս է Թիֆլիզ նոյնպէս օրը երկու անգամ 4 ժ. 40ր. կէսօրից յետոյ, և 10 ժ. 30ր. գիշերը։

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ խեղճ հիւանդների համար գտնվում է Ս. Նշան եկեղեցու մօտ Դարաշխեանի տանը։ Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև կէսօրից յետոյ 1 ժամը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը (исторія и теорія каллиграфіи), համեմատ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և գրաւեղաններ ու անատոմիքական ստուերագրերով Մ. Մ. Մխիթարեանց, Ս. Պետերբուրգ, 1872 թ. in 8°, էջ 274. մի օրինակը 1 ր. 70 կ., հինգ օրինակը 7 ր. 50 կ.—ճանապարհի ծախսով հանդերձ։ Նիւթերը. § 1 կանոնաւոր և վայելուչ գրութեան դրութիւնը մինչև XVIII դարու վերջը (և տեղեկութիւններ հայ տպագրութեան մասին 3—8) էջ. 1—14։ §II. Այս գիտութեան զարգանալը XVIII դարու վերջէն մինչև 1825 թ. 14—19։ §III. սորա դասատուութիւնը մինչև կարատէրը 19-22։ §IV. Կայսրերի և նորան հետևողների դասատուութեան ձևը-22-26։ §V. Ամանակով (по такту) գրել ուսուցանելու և մարմնամարզութեան վերաբերեալ գրագիտութիւնը (37,59—62 և 122) 26-41։ §VI. Հակման եղանակը (метода) 41-43. §VI, Դասատուութեան հիմնական կանոնները 44—52։ § VIII. Ուսանողների և ուսուցիչների պարապմունքների կերպը և յարաբերութիւնները։ (248 §XI 33—85). Հայ գրութեան պատմութիւնը. սկսգիր (83, 249), բուն երկաթագիր, միջին երկաթագիր կամ միջակագիր, նոտր գիր, շղագիր, նրբագիր, գրամագիր, կօնդակագիր, փառագիր, փակագիր և վարազագիր 83-106։ Մեր աշխատութեան հիմունքները և կերպը (249) 107—124։ §X. Դպրոցական գրաւեղանները, նոցա նատարանները, ստուերագրերը և գրագիտութիւնը (1-4-1-V, 149—150, 249)—125—144։ Դպրոցական առողջապահութիւնը (195,250,251)—144—150։ Յաւելուած Ա. Սկզբունքների նշանակութիւնը դաստիարակութեան գործի մէջ 150—178։ Բ. զանազան թանաքներ շինելու տարազներ և համառօտ տեխնիքական բառարան 178-189։ Գ. Անատոմիքական տեխնիկական հարկաւորութիւնը—190—196։ Դ. Յառաջադիմութեան և վերջադիմութեան տեղ և հայերէն բառարանութեան գրագիտութիւնը (208—216)—196—221։ Ե. Անատոմիքական ստուերագրեր (244—1-16-225) և համառօտ բառարան—222—248։ Տպագրութեան քանի մի էջերի պակասորդի լրումը . . 248—251։ Նկատած վրիպակների ցուցակը—252։ Նիւթերի ցանկը—253—254։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 19-го МАЯ 1873г. ТИФЛИСЪ Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ. Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ. Տպարան Հ. Էնֆիաճեանց և Ընկ. տան Մ. Բժշկապետ Ռոտինեանց։